



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 88586 գործարքներ, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 38.7%-ով: 2004թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 36625 օտարման գործարքների 90.6%-ը կազմել են առուվաճառքները, 8.8%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 41.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 43.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 27.6%-ով: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 13335 առուվաճառքի գործարքների 65.2%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.3%-ով:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
		11 ամիսներ 2004թ.	11 ամիսներ 2003թ.
Կենտրոն	350.0-970.0	457.7	382.1
Արաբկիր	250.0-560.0	359.4	275.9
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	220.9	167.3
Նոր-Նորք	115.0-250.0	187.5	134.1
Ավան	120.0-230.0	179.0	130.0
Էրեբունի	120.0-300.0	179.2	143.0
Շենգավիթ	120.0-270.0	204.2	141.7
Դավթաշեն	130.0-320.0	224.1	165.1
Աջափնյակ	120.0-300.0	202.5	143.4
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	201.1	139.4
Նուբարաշեն	65.0-120.0	79.2	62.7
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	226.8	171.3

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 32.4%:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 5144 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 18.9%-ով:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
			11 ամիսներ 2004թ.	11 ամիսներ 2003թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	65.4	62.1
	Ապարան	20.0-50.0	33.2	27.1
	Թային	20.0-50.0	29.8	24.6
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	56.4	53.9
	Մասիս	40.0-90.0	59.4	54.1
	Վեդի	30.0-60.0	38.8	31.1
	Արարատ	30.0-60.0	37.3	31.2
Արմավիր	Վաղարշապատ	50.0-130.0	93.4	82.0
	Արմավիր	40.0-80.0	55.4	44.7
	Մեծամոր	20.0-50.0	32.1	30.6
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	33.3	30.5
	Գավառ	20.0-50.0	32.7	30.0
	Մարտունի	20.0-60.0	33.5	29.1
	Վարդենիս	10.0-35.0	17.5	17.0
	Ճամբարակ	13.0-30.0	17.8	16.1
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.7	60.5
	Ստեփանավան	20.0-55.0	35.2	32.5
	Սյիտակ	30.0-70.0	34.5	23.5
	Ալավերդի	15.0-40.0	26.0	25.2
	Տաշիր	15.0-45.0	23.2	19.1
Կոտայք	Աբովյան	45.0-150.0	93.5	81.8
	Նոր Հաճն	50.0-110.0	62.8	51.4
	Բյուրեղավան	30.0-90.0	41.3	35.0
	Եղվարդ	35.0-80.0	46.7	40.1
	Հրազդան	30.0-85.0	38.0	30.3
	Ծաղկաձոր	40.0-130.0	81.8	75.0
	Չարենցավան	30.0-85.0	37.2	30.7
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	73.8	68.9
	Արթիկ	20.0-45.0	29.1	25.0
	Մարալիկ	18.0-45.0	26.7	23.3
Սյունիք	Գորիս	25.0-70.0	34.6	29.3
	Կապան	20.0-60.0	32.6	28.6
	Միսիան	20.0-60.0	32.8	27.3
	Մեղրի	18.0-58.0	25.4	25.1
	Ագարակ	18.0-50.0	25.2	21.5

	Քաջարան	13.0-40.0	19.3	18.1
Վայոց Ձոր	Վայք	30.0-70.0	37.4	34.8
	Եղեգնաձոր	40.0-90.0	49.1	46.5
	Ջերմուկ	40.0-100.0	47.1	40.6
Տավուշ	Դիլիջան	30.0-70.0	39.8	35.9
	Իջևան	40.0-90.0	47.5	40.2
	Բերդ	25.0-60.0	31.3	28.9
	Նոյեմբերյան	15.0-45.0	27.3	26.7

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 13.1%:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 5192 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1149, մյուս մարզերում միասին վերցրած՝ 4043: 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 28.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 8.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 35.4%-ով: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում, իսկ մյուս մարզերում՝ նվազման:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
		11 ամիսներ 2004թ.	11 ամիսներ 2003թ.
Կենտրոն	255.0-1000.0	467.1	388.2
Արաբկիր	205.0-900.0	366.5	279.0
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	222.3	169.1
Նորք-Մարաշ	120.0-550.0	333.5	292.8
Ավան	125.0-280.0	181.2	131.2
Էրեբունի	130.0-320.0	181.7	144.1
Շենգավիթ	120.0-350.0	205.5	142.7
Դավթաշեն	140.0-700.0	225.5	166.1
Աջափնյակ	125.0-320.0	204.5	144.5
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	202.8	140.5
Նուբարաշեն	65.0-150.0	80.5	64.8
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-1000.0	242.8	187.5

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում

անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, տարեկան աճը կազմել է 29.5%:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
			11 ամիսներ 2004թ.	11 ամիսներ 2003թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	84.8	82.0
	Ապարան	25.0-60.0	39.0	38.3
	Թալին	20.0-65.0	31.9	27.8
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	62.0	61.4
	Մասիս	50.0-90.0	63.4	61.9
	Վեդի	25.0-70.0	42.8	36.0
	Արարատ	20.0-65.0	40.6	36.8
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	96.3	86.3
	Արմավիր	35.0-90.0	58.3	51.6
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	37.9	36.2
	Գավառ	20.0-60.0	39.9	39.5
	Մարտունի	20.0-60.0	36.7	33.6
	Վարդենիս	15.0-50.0	21.4	20.9
	Ճամբարակ	15.0-50.0	20.5	18.7
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.8	67.7
	Ստեփանավան	15.0-60.0	38.5	33.0
	Սպիտակ	20.0-60.0	36.2	24.0
	Ալավերդի	15.0-50.0	27.1	25.8
	Տաշիր	15.0-55.0	24.1	19.6
Կոտայք	Արուսյան	70.0-130.0	97.8	91.5
	Նոր Հաճն	40.0-90.0	63.7	53.8
	Բյուրեղավան	25.0-70.0	42.7	37.8
	Եղվարդ	40.0-80.0	49.9	46.8
	Հրազդան	25.0-65.0	42.2	39.5
	Ծաղկաձոր	70.0-120.0	89.7	84.6
	Չարենցավան	25.0-65.0	38.2	33.2
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.5	89.4
	Արթիկ	20.0-55.0	30.8	28.1
	Մարալիկ	15.0-50.0	27.4	23.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	36.1	31.2
	Կապան	20.0-60.0	33.9	30.5
	Միսիան	20.0-60.0	33.7	28.2
	Մեղրի	15.0-50.0	28.3	28.1
	Ագարակ	15.0-50.0	27.8	24.1
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	38.7	36.5
	Եղեգնաձոր	35.0-80.0	50.7	48.8

Տավուշ	Ջերմուկ	25.0-65.0	43.8	42.8
	Դիլիջան	20.0-70.0	44.3	38.9
	Իջևան	35.0-80.0	48.4	40.8
	Բերդ	20.0-60.0	32.3	30.6
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.9	30.7

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, տարեկան աճը կազմել է 8.8%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 8736.27 հա /այդ թվում 353.39հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 7921.44 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 8589.35 հա հողերի /այդ թվում 345.50 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 7794.91հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 50 միավոր /66.44 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 23-ը` /38.54 հա/ Երևանում և 4 միավոր /51.73հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

Օտարված 126.00 հա /այդ թվում 2.80 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 116.37 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, 20.91հա /այդ թվում 5.09 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ որից 15.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են :

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 4261.98 հա, որից 4223.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն հողերի վարձակալության իրավունքի, արդյունաբերության օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակակա և կառուցապատ . հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակակա և կառուցապատ . հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	455	71.81	247	129.09	0	0.00	691	68.42	177	37.05
Արագածոտն	20	237.69	3	0.23	14	1.47	403	313.88	265	34.31	13	2.65
Արարատ	421	1320.49	816	87.67	19	7.30	946	372.91	524	44.86	0	0.00
Արմավիր	142	2394.94	39	3.84	4	0.36	838	1828.35	277	26.70	5	1.42
Գեղարքունիք	1	0.13	28	4.02	3	0.84	58	64.60	40	4.98	5	1.09
Լոռի	0	0.00	1	0.03	1	0.005	159	129.65	48	5.71	12	1.17
Կոտայք	139	224.98	32	3.04	3	3.23	1138	444.32	1080	108.85	10	5.18
Շիրակ	4	7.92	5	0.20	10	2.09	194	198.16	65	4.15	6	0.21
Սյունիք	1	0.10	1	0.20	0	0.00	113	146.24	9	1.17	0	0.00
Վայոց Ձոր	7	38.38	41	5.69	10	1.92	56	21.74	19	1.23	6	0.73

Տավուշ	1	1.20	6	0.34	4	0.33	61	49.23	19	1.39	2	0.72
Ընդամենը	736	4225.83	1427	177.07	315	146.64	3966	3569.08	3037	301.77	236	50.22

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հողերի 9776 առուվաճառքի գործարքներ /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 5705/, այդ թվում 4702-ը՝ գյուղատնտեսական նշանակության /2816/, 5020-ը՝ բնակավայրերի /2860/, 50-ը՝ արդյունաբերական օբյեկտների /29/ և 4-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի, այդ թվում նաև գյուղատնտեսական նշանակության հողերի, առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հողերի առուվաճառքներից 2204-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 802/, այդ թվում 460-ը՝ /81.46 հա/ Երևանում /217/, իսկ 1744-ը՝ /4293.16 հա/ մյուս մարզերում /585/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 724 միավորը /4113.12 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 134/, 1346-ը՝ /167.99 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /617/, 124-ը՝ /30.93 հա/ հասարակական կառուցապատման /48/, 7-ը՝ /11.03 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/, և 3-ը՝ /51.52 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 5 գործարքներ:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի 4702 առուվաճառքների գործարքներից 724-ն իրականացվել են աճուրդների, 27-ը դատարանի վճռով և 12-ը ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	18	156.69	50.0	765.0	210.0	299	105.59	800.0	10000.0	2755.0
Ապարան						24	11.84	200.0	1700.0	465.0
Թալին	1	1.00	840.0	840.0	840.0	60	140.62	200.0	1680.0	440.0
Ծաղկահովիտ						17	49.84	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	221	433.73	25.0	18095.0	1315.0	361	112.71	740.0	12000.0	2120.0
Մասիս	62	245.98	55.0	97795.0	2325.0	228	91.16	400.0	8800.0	1410.0
Վեդի	136	630.82	35.0	5350.0	1830.0	347	163.96	450.0	7200.0	1315.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	190.0	45.0	45.0	45.0	239	515.54	650.0	4650.0	1350.0
Բաղրամյան	72	2028.73	20.0	2310.0	565.0	169	832.08	200.0	1500.0	515.0

Վաղարշապատ	69	176.21	40.0	26160.0	1850.0	423	474.87	980.0	14000.0	2230.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						14	2.89	420.0	1100.0	645.0
Ճամբարակ						6	3.74	100.0	500.0	200.0
Մարտունի						3	0.56	100.0	4000.0	730.0
Սևան						5	0.30	100.0	1000.0	385.0
Վարդենիս						29	52.46	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Այվերդի						58	42.49	360.0	5500.0	885.0
Գուգարք						14	3.92	500.0	6000.0	1685.0
Սպիտակ						5	1.60	500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						59	40.69	180.0	4000.0	450.0
Տաշիր						22	40.41	100.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Արմյան	54	30.89	85.0	1480.0	710.0	728	167.35	600.0	20000.0	5265.0
Եղվարդ	23	129.40	110.0	3290.0	650.0	337	187.46	380.0	10000.0	3300.0
Հրազդան	56	55.28	20.0	4090.0	455.0	72	89.05	250.0	6000.0	870.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						127	108.88	550.0	2500.0	705.0
Ամասիա						11	24.14	80.0	525.0	185.0
Անի	1	5.00	400.0	400.0	400.0	26	34.98	240.0	800.0	290.0
Աշոցք						9	8.27	60.0	210.0	145.0
Արթիկ	3	2.92	270.0	595.0	385.0	17	16.78	140.0	800.0	295.0
Սյունիքի մարզ										
Գորիս						43	62.25	200.0	1600.0	455.0
Կապան	1	0.10	270.0	270.0	270.0	12	10.12	120.0	2000.0	330.0
Մեղրի						8	1.78	400.0	4240.0	840.0
Սիսիան						50	72.09	90.0	1500.0	315.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	25.18	185.0	396.0	315.0	39	16.15	260.0	4000.0	2070.0
Վայք						17	5.59	120.0	3400.0	870.0
Տավուշի մարզ										
Բերդ						13	4.43	100.0	2000.0	615.0
Իջևան	1	1.20	503.0	503.0	503.0	21	25.70	530.0	4000.0	1345.0
Նոյեմբերյան						27	19.10	100.0	8340.0	640.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 3318 առուվաճառքի գործարքներ, որից 964-ն իրականացվել են աճուրդների, 13-ը դատարանի վճռով և 8-ը ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

աձառյուզանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	800.0	312.0	312.0	312.0	244	261175.0	250.0	8000.0	2765.0
Ապարան						6	14470.0	250.0	1400.0	335.0
Թալին	2	1478.0	90.0	2232.0	1160.0	14	66890.0	100.0	800.0	135.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	471	517151.0	20.0	2705.0	410.0	121	115499.2	300.0	6000.0	860.0
Մասիս	119	110560.0	210.0	1210.0	650.0	307	238040.0	300.0	20000.0	1070.0
Վեդի	224	246401.0	90.0	1270.0	380.0	94	92830.2	250.0	2200.0	640.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						68	63201.0	300.0	5000.0	985.0
Բաղրամյան						6	8040.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ	39	38400.0	230.0	755.0	420.0	203	195744.0	300.0	10000.0	1550.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						18	25500.0	300.0	2000.0	585.0
Ճամբարակ						3	2117.0	100.0	300.0	145.0
Մարտունի	14	16800.0	66.0	120.0	95.0	14	15540.0	200.0	600.0	250.0
Սևան	10	20000.0	100.0	225.0	170.0	5	6600.0	200.0	2000.0	255.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Այվերդի						3	3225.0	150.0	600.0	210.0
Գուգարք						17	14839.0	150.0	5200.0	755.0
Սպիտակ						8	11530.0	140.0	900.0	175.0
Ստեփանավան	1	300.0	100.0	100.0	100.0	17	20713.0	100.0	600.0	160.0
Տաշիր						1	1330.0	100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	5369.0	95.0	920.0	300.0	422	393212.0	300.0	10000.0	1860.0
Եղվարդ	25	25000.0	90.0	90.0	90.0	599	634450.0	300.0	10000.0	2105.0
Հրազդան						56	58697.0	300.0	8000.0	1480.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						49	32095.7	250.0	3400.0	385.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի						1	1630.0	150.0	400.0	185.0
Աշոցք						1	1700.0	90.0	300.0	115.0
Արթիկ	4	1990.0	150.0	4044.0	1895.0	12	5250.0	150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	7209.0	150.0	1200.0	390.0
Կապան	1	2000.0	30.0	30.0	30.0			150.0	1400.0	410.0
Մեղրի						1	390.0	150.0	900.0	230.0
Սիսիան						3	4110.0	150.0	900.0	245.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	39	48300.0	50.0	340.0	90.0	9	8153.0	150.0	2200.0	320.0
Վայք	2	8560.0	515.0	725.0	620.0	7	757.6	170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	5	2800.0	150.0	478.0	390.0	17	11686.0	150.0	2200.0	590.0
Նոյեմբերյան						2	2230.0	100.0	1400.0	210.0

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 139 գործարքներ 90.19 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Երևանում /1.47 հա/, 2-ը՝ Արագածոտնի /13.08 հա/, 76-ը՝ Արարատի

/19.00 հա/, 6-ը՝ Արմավիրի /7.02 հա/, 9-ը՝ Գեղարքունիքի /4.56 հա/, 10-ը՝ Շիրակի /10.95 հա/, 5-ը՝ Սյունիքի /5.63 հա/, 8-ը՝ Վայոց Ձորի /1.67հա/ և 21 -ը՝ Տավուշի /26.81 հա/ մարզերում

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8187 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 33.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 47.8%-ով:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 593 բնակարանների, 238 բնակելի տների, 2209 հասարակական, 244 արտադրական նշանակության օբյեկտների, 51 ավտոտնակների, 2 այգետնակի և 4850 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 529 վարձակալության գործարքների քանակները 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 36.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալվել են 21240.06 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 164.76 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 17309.70 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 1480.99 հա նախկին պահուստային/, 185.09 հա բնակավայրերի, 409.22 հա արդյունաբերական օբյեկտների, 19.96 հա էներգետիկայի օբյեկտների, 2808.70 հա անտառային, 174.11 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 39.00 հա ջրային, 129.50 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 3704.39 հա, որից 3646.33 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4450.74 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	9	1065.00	355	2124.29
Արարատ	17	1982.00	306	1664.33
Արմավիր	0	0.00	110	1802.46
Գեղարքունիք	31	525.20	311	1497.04
Լոռի	4	17.00	206	856.25
Կոտայք	6	378.54	338	765.12
Շիրակ	9	232.00	306	2342.64
Սյունիք	10	251.00	156	728.69
Վայոց Ձոր	0	0.00	242	942.15
Տավուշ	0	0.00	33	135.99
Ընդամենը	86	4450.74	2363	12858.96

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6839 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 62.5%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 37.4%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.1%/, առանձնատների /15.1%/ և հողերի /17.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3458 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 69.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 1340.98 հա /այդ թվում 18.30 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 1310.57 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 494.67 հա, որից 490.60 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 243 և 90 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակն աճել է 2.5%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում 30.9%:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 15035 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 66.2%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /45.5%/: 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսներին առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

